32	Կորեայի ձոր	հոսքաչափի մալուխի վերանորոգում
33	Ավետիսյան 80	Պոմպի աշխատանքի կարգավորում
34	Սեբաստիա 25 - 78	Պոմպի աշխատանքի կարգավորում
35	Դրոյի 28	1h բարձր ճնշման ռելե, 1h ավտոմատ անջատիչ
36	Պարոնյան 28 - 107	4h առանցքակալ - շարունակելի
37	Սոսե 2/2 - 49	1h հետադարձ փական, 1h ավտոմատ անջատիչ
38	Սունդուկյան 15/5 - 36	Պոմպի աշխատանքի կարգավորում
39	Շինարարներ 10/1 - 56	2h բարձր ճնշման ռելե
40	Սունդուկյան 15/4 - 30	Պոմպի աշխատանքի կարգավորում
41	Գյուլբենկյան 2/1 - 44(Սոսեի 2նրբ.2շ.)	Պոմպի աշխատանքի կարգավորում
42	Շինարարներ 15/1	Էլ. համակարգի վերանորոգում
43	Վաղարշյան 1 և 3 շ.2.	Պոմպի աշխատանքի կարգավորում
44	Ռուբինյանց 24 - 53	1հատ ավտոմատ անջատիչի փոխում և 1հատ ավտոմատիկայի կառավարիչ
45	Օրբելի 67	15կվ պոմպի տեղադրում
46	Մխակյան 22Շ	1h ցածր ճնշման ռելե
47	Ռուսթավելի 0 - 20	Պոմպի աշխատանքի և էլ. համակարգի կարգավորում
48	Պարոնյան 28 - 107	Պոմպի սնուցող մալուխի վերանորոգում, պոմպի աշխատանքի կարգավորում
49	Կորեայի ձոր	Հոսքաչափի մալուխի վերանորոգում
50	Ազատության 3/1	Փոխվել է 2 առանցքակալ, 1 վերանորոգման հավաքածու, 1 ստատոր, ճնշման բաքի միացման դետալներ և 300լ ճնշման բաքի մեմբրան
51	Սեբաստիա 25	Փոխվել է 300լ ճնշման բաքի մեմբրան և 1 եռաֆազ թողարկիչ
52	Սոսե 2նրբ, 8շ	փոխվել է ճնշումային բաքի մեմբրան 200լ
53	Ա-3թաղ, 26շ	Պոմպի աշխատանքի կարգավորում
54	Ա-3 թաղ, 25շ	Պոմպի աշխատանքի կարգավորում
55	Վ.Փափազյան 11	Պոմպի աշխատանքի կարգավորում
56	Հր. Քոչար 15 - 41	Էլ սարքերի զննում, կարգավորում, մալուխի վերանորոգում
57	Սարյան 24	Պոմպի աշխատանքի կարգավորում
58	գ.Արգել /Նուշի սովխոզ/	Պոմպի աշխատանքի կարգավորում
59	գ.Մերձավան	Պոմպի աշխատանքի կարգավորում
60	Ուլնեցի 66	1h խծուկ, 1h ավտոմատ անջատիչ
61	Ֆրիկի 2,4	Պոմպի աշխատանքի կարգավորում

62	Աղ.Սերոբ 10	Պոմպի աշխատանքի կարգավորում
63	Բաշինջաղյան 2 նրբ. 2 - 56	փոխվել 1 հատ եռաֆազ թողարկիչ, 1 հատ ավտոմատ անջատիչ
64	Զովունի 9Փ 125	4 կվտ շարժիչի վերանորոգում, փոխվել է 1 եռաֆազ թողարկիչ
65	Շինարարներ 10/1 - 56	Պոմպի աշխատանքի կարգավորում
66	Հր. Քոչար 15 - 20	Էլ. մալուխի վերանորոգում
67	Շինարարների 10/1	Պոմպի աշխատանքի կարգավորում
68	Դեմիրճյան 40	Պոմպի աշխատանքի կարգավորում
69	Հ. Էմինի 4 - 47	2 հ եռաֆազ թողարկիչի փոխում
71	մ. Արմավիր.գ.Արգել	Պոմպի աշխատանքի կարգավորում
72	ք.Հրազդան, Վերին Աղբյուրակ թաղ.	Էլ. համակարգի վերանորոգում
74	Հակոբյանի 1 - 155	Պոմպի աշխատանքի կարգավորում
75	Սեբաստիա 141/2 - 35	Պոմպի աշխատանքի կարգավորում
76	Հր.Քոչարի 18 - 54	Էլ մալուխի վերանորոգում
77	Սեբաստիա 141	1 հ խցուկ
78	մ.Արմավիր գ.Այգել	Պոմպի աշխատանքի կարգավորում
79	ք.Եղվարդ	Պոմպի աշխատանքի կարգավորում
80	գ.Զովունի	Էլ. սարքերի կարգավորում
81	Բաբայանի 30 - 28	1 հ մեմբրան 300լ, 1 հ եռաֆազ թողարկիչ, 2 հ առանցքակալ
82	Սունդուկյան 3	Փոխվել է 1 եռաֆազ թողարկիչ
83	Սունդուկյան 1 - 31	Պոմպի աշխատանքի կարգավորում
87	Բաշինջաղյան 2 նրբ. 2 - 56	Պոմպի շարժիչի վերանորոգում, շարունակելի
88	Կոմիտաս 48/1 - 15	1 հ ստատոր, 1 հ լիսեռ, 1 հ առանցքակալ, 1 հ ավտոմատ անջատիչ, 1 հ ճնշումային բաք 300լ
89	Լենինգրադյան փողոց	Հոսքաչափի աշխատանքի (Էլ.համակարգի) գնում
90	Ա. Խաչատրյան 1 - 79	Պոմպակայան սնուցող մալուխի փոխում
91	Գյուլբենկյան-Քոչար խաչմ.	հոսքաչափի Էլ. սարքերի կարգավորում
92	Բաշինջաղյան 2 նրբ. 1 - 52	Պոմպի շարժիչի վերանորոգում
93	Գյուլբենկյան 39/1 - 8	Պոմպի աշխատանքի կարգավորում
94	Գյուլբենկյան 43 - 55	Պոմպի աշխատանքի կարգավորում
95	Գուլակյան 14/1 - 39	Փոխվել է 1 խցուկ
96	Երզնկյան 2 և 4 շ.շ.	Փոխվել է 1 ավտոմատ անջատիչ, 1 լիսեռ, 2 ստատոր
97	Արարատյան 2 գանգվ. 16 շենք	Էլ.մալուխի փոխում Փոխվել է 1 ջրի պոմպ, պոմպի դեկավարման սարք, 1 հ ճնշումային բաք 100լ, 3 հ կափույր, 1 հ ֆիլտր, 1 հ հետադարձ փական, պոմպի և բաքի միացման դետալները պլաստիկ, 2 հ կցաշուրթ, վնասված դետալների վերականգնում,
98	Արդուրյան 29	Պոմպի աշխատանքի կարգավորում
99	Մարշալ Բաղրամյան 70 - 44	Պոմպի աշխատանք կարգավորում
100	Գյուլբենկյան 39, 41	Փոխվել է ճնշման բաքի միացման դետալները և 1 հ կափույր
101	Գյուլբենկյան 2 - 53	Պոմպի աշխատանքի կարգավորում
102	Սունդուկյան 15/5 - 36	Պոմպի աշխատանքի կարգավորում
103	Նիկոլ Դոման 51 - 53	Պոմպի այրված շարժիչի վերանորոգում
104	Գուլակյան 16բ	Փոխվել է ճնշումային բաքի մեմբրան 300լ
105	մ.Կոտայք, գ.Քախսի	Պոմպի աշխատանքի կարգավորում

106	ք. Չարենցավան 4 նրբ. 7	Պումպի աշխատանքի գնում, կարգավորում, 1h կցորդիչ, 1h լիսեռ, 1h բանվորական անիվ, 2h առանցքակալ
107	ք. Էջմիածին, Վաղարշապատ փող.	Պումպի աշխատանքի գնում, կարգավորում Փոխվել է 2 առանցքակալ
108	Գյուլբենկյան 39/1 - 8	Էլ. սարքերի կարգավորում
109	Գյուլբենկյան 43 - 175	Պումպի աշխատանքի կարգավորում
110	Սիլիկյան թաղ., 7 փ. - 70 քոթ.	Փոխվել է 1 ավտոմատ անջատիչ
112	Եղվարդ Արային թաղ 1 Փփ1 նրբ 6Տ	Պումպի շարժիչի վերանորոգում
113	Գաջեգործների փ. 742	Ավտոմատիկայի կառավարչի, թողարկիչի, պոմպի խցուկի փոխարինում
114	Շնչենկո 1	Առանցքակալի, լիսեռի, ավտոմատ անջատիչի, պոմպի խցուկի փոխարինում
115	Նարեկացու 42	Ստատորի, լիսեռի փոխարինում
116	Դիմիտրովի 72	Պումպի շարժիչի վերանորոգում, առանցքակալի, ճնշումային բաքի միացման պլաստիկ դետալների փոխարինում
117	Ն. Շենգավիթ 37/1	Բարձր ճնշման ռելեի, պոմպի խցուկի, առանցքակալների փոխարինում
118	Գ. Նժդեհի 45	Ավտոմատ անջատիչի փոխարինում
119	Շիրակի 56/1	Թողարկիչի, բարձր ճնշման ռելեի փոխարինում
120	Չելտովի 10	Պումպի խցուկի, ավտոմատ անջատիչի փոխարինում
121	Շարուրի 26, 28	Հետադարձ փականի 1, 1/2, ավտոմատիկայի կառավարչի փոխարինում
122	Աթոյան անց. 12/3	Ավտոմատ անջատիչի, ճնշումային բաքի միացման պլաստիկ դետալների, խողովակների միացման դետալների, ճնշումային բաքի մեմբրանի փոխարինում
123	Նորքի 5-րդ գ-ծ, 212.	Ավտոմատ անջատիչի, փողարկիչի, բարձր ճնշման ռելեի փոխարինում
124	Նորքի 5-րդ գ-ծ, Մառի 12	Մոնոմետրի փոխարինում
125	Նորքի 5-րդ գ-ծ, 422.	Պումպի շարժիչի վերանորոգում, մանոմետրի, բարձր ճնշման ռելեի, հետադարձ փականի 1,1/2, ավտոմատիկայի կառավարչի փոխարինում
126	Աթոյան անց. 8	Մոնոմետրի փոխարինում
127	Արշակունյաց 56	Առանցքակալի, ստատորի, ցածր ճնշման ռելեի, եռաֆազ թողարկիչի փոխարինում
128	Մասիսի 99/3	Ռելեի, եռաֆազ թողարկիչի փոխարինում
129	Թումանյան 5/1	Եռաֆազ փողարկիչի փոխարինում
130	Նարեկացու 37	Ռետինե խողովակի միացման դետալների, եռաֆազ թողարկիչի փոխարինում
131	Նար Դոսի 1	Եռաֆազ թողարկիչի, ավտոմատ անջատիչի, հետադարձ փականի 2" փոխարինում
132	Աղայան 9	Հետադարձ փականի 1, 1/4", լիսեռի փոխարինում
133	Բլյուսովի 28	Հետադարձ փականի 1, 1/4", եռաֆազ թողարկիչի փոխարինում
134	Սարյան 4	Մանոմետրի, բարձր ճնշման ռելեի, եռաֆազ թողարկիչի փոխարինում
135	Արշակունյաց 42/3	Ստատորի փոխարինում
136	Արցախի 8	Ռետինե խողովակի միացման դետալների փոխարինում
137	Շարուրի 24	Ավտոմատ անջատիչի փոխարինում
138	Արարատյան 62/1	Պումպի խցուկի, եռաֆազ թողարկիչի փոխարինում
139	Ֆրունզե 6	Առանցքակալի, ճնշումային բաքի մեմբրանի, լիսեռի փոխարինում
140	Արցախի 24/1	Եռաֆազ թողարկիչի փոխարինում
141	Նուբարաշեն 6/1	Ցածր ճնշման ռելեի, պոմպի խցուկի փոխարինում
142	Արտաշիայան 61	Ռետինե խողովակի միացման դետալների, բարձր և ցածր ճնշման ռելեների փոխարինում
143	Արշակունյաց 30	Բարձր և ցածր ճնշման ռելեների փոխարինում

144	Վ. Շենգավիթ 2փ. 1, 2 շ	Ռետինե խողովակի միացման դետալների փոխարինում
145	Ք. Սևան, Նաիրյան 131	Առանցքակալի, լիսեռի, պոմպի խցուկի, բանվորական անիվի փոխարինում
146	Ք. Սևան, Շահումյան 35, 37ա	Պոմպի շարժիչի վերանորոգում, թողարկիչի, առանցքակալի, ֆիլտրի 2", անցման 2" փոխարինում

1.6. Մեքենա-մեխանիզմներ

Հունիս ամսին իրականացվել են մեքենա-մեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

Հունիս ամսվա ընթացքում իրականացվել են թվով 2 մեքենաների շարժիչների կապիտալ վերանորոգում, փոխարինվել են միացները, միացաօղերը, ներդրակները, խտաբուկերը և



կատարվել են հղկման աշխատանքներ, շարժիչի գլխիկները ենթարկվել են հղկման և կափույրները, խցուկները փոխարինվել են:

Թվով 5 մեքենաների շարժիչները մասնակի նորոգվել են, փոխարինվել են շարժիչի հանդարտիչները, հղկվել և կարգավորվել են գլխիկները, փոխարինվել են կայծամուները և ներդիրները:

Թվով 4 մեքենաների մարտկոցները փոխարինվել են նորով:

Թվով 13 մեքենաների հոսանքները կարգավորվել և վերանորոգվել են, փոխարինվել են կայծամուներ, կայծամումի լարեր, էլ. ուղեներ, վառոցքի բանալիներ և մալուխներ:

Թվով 3 մեքենաների մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Իրականացվել է թվով 5 էքսկավատորների բազուկների և շերեփների նորոգում:



Թվով 9 մեքենաների արգելակման համակարգերը նորոգվել են. փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Թվով 5 մեքենաների փոխանցման տուփերը նորոգվել են, փոխարինվել են աստամնանիվներ, առանցքակալներ, խտաբուկներ, ներդիրներ:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 5 մեքենաների վրա, փոխարինվել



են հովացման ռադիատորներ, հովացման ռադիատորների կափարիչներ, խողովակներ, փոկեր և ջրի պոմպեր:

Վերանորոգվել են թվով 6 մեքենաների և էքսկավատորների բարձր ճնշման խողովակներ:

Կատարվել է թվով 3 մեքենաների թափքի նորոգում, ապակիների, ծածկոցի տեղադրում:

Կցորդման համակարգի նորոգումներ են իրականացվել թվով 11 մեքենաների վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ,

շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Իրականացվել է թվով 4 մեքենաների խլացուցիչների նորոգում և փոխարինում, կատարվել են գոդման աշխատանքներ, ռետինների, ներդիրների և խամուտների փոխարինում:

Վերանորոգվել է թվով 9 մեքենաների ջրի մղիչները, փոխարինվել են փոկերը: Թվով 3 մեքենաների ուժեղացուցիչները վերանորոգվել են, փոխարինվել են աստամանիվներ, առանցքակալներ, խտաբուկներ, ներդիրներ:

Առջևի համակարգի նորոգում կատարվել է թվով 9 մեքենաների վրա. փոխարինվել են գնդավորներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի գսպակներ և հարվածամեղմիչներ:



Հետևի կամրջակի նորոգումներ կատարվել է թվով 18 մեքենաների վրա, փոխարինվել են կարդանի խաչուկներ, աստամանիվներ, առանցքակալներ, կիսաստնիներ, խտաբուկներ, մանեկներ, սատելիտներ:

Բարձր ճնշման հիդրոհամակարգի նորոգումներ կատարվել են թվով 4 մեքենաների և էքսկավատորների վրա, փոխարինվելով և նորոգվելով հիդրոյուղեր, խտաբուկներ, բարձր ճնշման մղիչներ:

Իրականացվել է թվով 2 անվահեծերի փոխարինում: Փոխարինվել են թվով 46 մեքենա-մեխանիզմների շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր և զտիչներ:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարների ժամանակին վերացմանը :

2. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Բաժանորդների տվյալներ


Շարունակվում է բաժանորդների հետ նոր պայմանագրերի կնքման գործընթացը: Երևանի տարածաշրջանից «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 60.367, իսկ Մարզերում 50.146 նոր պայմանագիր:


Ստորև ներկայացված աղյուսակում բերված են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ բաժանորդների տվյալների բազայում 01.07.2017թ. դրությամբ հաշվառված բաժանորդների քանակական տվյալները.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Գոյություն ունեցող բաժանորդների ընդհանուր քանակը	Ծախսող բաժանորդների քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	333.091	250.154	75.1
2		Իրավաբանական անձ	16.997	12.203	71.8
1	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	383.874	250.659	65.3
2		Իրավաբանական անձ	16.009	7.837	49.0

2.2. Հասույթ

Գործողություններ են ձեռնարկվում Ընկերության հասույթի մակարդակի բարելավման ուղղությամբ: Մասնավորապես. ջրաչափական սարքերի ցուցմունքների ճշգրիտ և ժամանակին մուտքագրում, ինչը հանդիսանում է իրատեսական հասույթի ձևավորման նախապայման: Ստորև, գրաֆիկային տեսքով, բերված է 2017թ. բաժանորդների ամսական սպառման ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.





Շարունակվում են զրոյական ծախսերի և կասկածելի ջրածախսերի վերաբերյալ վերլուծությունները: Ստորև, աղյուսակի տեսքով, բերված է 2017թ. հունիս ամսին Ընկերության Առևտրային տնօրինությունների հասույթի առաջադրանքների կատարողականության ցուցանիշները.

Տարածաշրջան	Ամիս	Առաջադրանք	Փաստացի	Տարբերություն
		հազ.մ3	հազ.մ3	%, հազ.մ3
Երևան Մարզեր	Հունիս	6,132	6,104	-0.46
	Մարզեր	4,029	4,090	1.52

Աղյուսակում արտացոլված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ծախսի տվյալները.

Տարեթիվ	Երևան	Մարզեր
	Հունիս	
2016թ.	13.7	9.4
2017թ.	14.3	11.5
Տարբերությունը	0.6	2.1

2.3. Գանձում

Հաշվետու ժամանակահատվածում Ընկերության ձևավորված հասույթի դիմաց գանձման առաջադրանքի կատարման տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Գանձում	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Ընդամենը
Երևան	Առաջադրանք	1.024.561	1.006.737	971.133	964.825	1,057,245	5.024.501
	Հավաքագրում	692.209	1.143.800	887.210	978.278	1,001,569	4.703.066
	%	67.56	113.61	91.36	101.39	94.73	93.60
Մարզեր	Առաջադրանք	582.951	608.945	594.916	560.140	657.432	3.004.384
	Հավաքագրում	101.954	592.521	468.175	547.640	561.150	2.271.440
	%	17.49	97.30	78.70	97.77	85.35	75.60

2.4. Ջրաչափեր

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ բաժանորդների տվյալների բազայում 01.07.2017թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև՝ աղյուսակի տեսքով.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում՝ ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում՝ ծախսող	%
Երևան	Ջրաչափով	327.459	248.384	75.85	16.328	12.176	74.57
	Առանց ջրաչափի	5.632	1.770	31.43	669	27	4.04
Մարզեր	Ջրաչափով	333.391	240.677	72.19	14.364	7.799	54.30
	Առանց ջրաչափի	50.483	9.982	19.77	1.645	38	2.31

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում փոխարինվել է շուրջ 4.230, իսկ Մարզերում 1.854 հատ ջրաչափական սարք: «Վեոլիա Ջուր» ՓԲԸ Տվյալների բազայում 01.07.2017թ. դրությամբ հաշվառված պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները բերված են ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%
Երևան	443.072	281.176	63.46	18,991	2.968	15.63
Մարզեր	391.290	74.833	19.12	16.492	1.581	9.59

2.5. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում



Ընկերության համապատասխան ստորաբաժանումների կողմից տարվում են շարունակական աշխատանքներ ապօրինի ջրամիացումների հայտնաբերման ուղղությամբ, ինչը կարևոր նշանակություն ունի հասույթի աճի և ջրակորուստների նվազեցման համար:

Ընտրանքային ստուգայցեր են իրականացվել առևտրային տնօրինությունների տարբեր տեղամասեր: Հայտնաբերված ապօրինի ջրամիացումների վերաբերյալ կազմվել են խախտման ակտեր, որոնք հաշվառվել են բաժանորդների տվյալների բազայում:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:



Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար	Վճարում
Երևան	87	98.3	16.388.5	7.537.8
Մարզեր	185	112.6	18.505.3	4.348.1




3.ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

3.1.Ջրամատակարարման շարունակականություն

Հաշվետու ամսին Երևան քաղաքի ջրամատակարարման շարունակականության տվյալները կազմել են 97.7%, ինչը 0.1%-ով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ:



Մյուս բոլոր քաղաքների և գյուղական համայնքների համար ջրամատակարարման փաստացի տևողության և հայտարարված գրաֆիկների միջև դեռևս առկա է զգալի տարբերություն:





Ջրամատակարարման շարունակականությունը (Երևան)



Աշխատանքային վիճակը որոշելու համար կատարվել են թվով 81 ճնշման կարգավորիչ փականների ստուգումներ: Պարզվել է, որ 24 ՃԿՓ-ներ անսարք են, որոնք և տեղափոխվել են համապատասխան ստորաբաժանում՝ անսարքությունները վերացնելու նպատակով:

Ստորև նեկայացված են կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ճնշման լոգերների գրաֆիկները՝ աշխատանքներից առաջ և հետո.





Հաշվետու ամսվա ընթացքում «Մասիս» և «Մարաշ» տեղամասերում իրականացվել են ջրակորուստների ուսումնասիրման աշխատանքներ, որտեղ տեղադրվել են թվով 2 «Vzliot» տեսակի հոսքաչափեր՝ ջրաքանակի ծախսը որոշելու նպատակով:

h/h	Տարածաշրջանի տնօրինություն	Տեղամաս	Հոսքաչափի տեղադրման հասցեն
1	Արևելք	Մասիս	գ. Գետափնյա
2		Մարաշ	Մարաշի ՕԿԶ

Երևան քաղաքի Սարալանջի և Էրեբունի փողոցներում խողովակաշարի ներքին ուսումնասիրման տեսախցիկով իրականացվել են ուսումնասիրություններ: Արդյունքում հայտնաբերվել են ճլ/վ ջրաքանակով վթարներ, որոնց մասին տեղյակ է պահվել «Էրեբունի» և «Կենտրոն» տեղամասերի համապատասխան պատասխանատուներին՝ վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելու նպատակով:

h/h	Տարածաշրջանի տնօրինություն	ՏՏ	Վթարի հասցեն	Վթարի քանակը (լ/վ)
1	Արևելք	Կենտրոն	Սարալանջի փողոց	5
2		Էրեբունի	Էրեբունի փողոց	1

3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում

Հաշվետու ամսվա ընթացքում պոմպակայաններում առաջացած թվով 25 էլ.մատակարարման խափանումները օպերատիվ կերպով կարգավորվել են: Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է թվով 122 հասցե: Թվով 20 պոմպակայաններում հայտնաբերվել և վերացվել են թերություններ: Էլ.համակարգի ուսումնասիրության արդյունքում 17 հասցեներում հայտնաբերվել է նաև 16.299կՎտ հավելագրում, ինչի մասին տեղեկացվել է «ՀԷՑ» ՓԲԸ-ի համապատասխան պատասխանատուներին՝ ուղղում կատարելու նպատակով:

Կատարված աշխատանքները ստորև ներկայացված են աղյուսակային տեսքով:


h/h	Հասցե	Կատարված աշխատանք	Ամսական Կվտ
1	Արեգնաղեմ ք/կ	հավելագրում	16.299
2	Կամո 48ա (ՏԵ 141)	հավելագրում	
3	ԿոՏՏոյան 5գ (ՏԵ 181)	հավելագրում	
4	Թբ. Խճ. 6ա (ՏԵ 219)	հավելագրում	
5	Ղանդիլյան 1/1ա	հավելագրում	
6	Անտառավան 3 թաղ 25 (ՏԵ 138)	հավելագրում	
7	Նժդեհի 14(ՏԵ 101բ)	հավելագրում	
8	Շիրակ կենտ (ՏԵ 47)	հավելագրում	
9	Շիրակ 61/21 (ՏԵ 46)	հավելագրում	
10	Թբիլիս 40 (ՏԵ 92)	հավելագրում	
11	Կամոյի 71 (ՏԵ 141)	հավելագրում	
12	Բոբյան 4 (ՏԵ 206)	հավելագրում	
13	Հույս Հույս թաղ 1,2,3,4,5	հավելագրում	
14	Սևյան 22 (ՏԵ 162)	հավելագրում	
15	Թբիլիսյան խճ. 5 (ՏԵ 258)	հավելագրում	
16	Ղանդիլյան 3 (ՏԵ 277)	հավելագրում	
17	Ղանդիլյան 25,27 (ՏԵ 162)	հավելագրում	
18	Բագրատունյաց 17	Ռելեի փոխարինում	940.0
19	Թելմանի 3	Ռելեի փոխարինում	
20	Բագրատունյաց 35	Ռելեի փոխարինում	

Շոգ եղանակային պայմանների պատճառով հաշվետու ամսում ջրառը ավելացել է 733լ/վ-ով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ :

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում նախկին կանխատեսվող էլ.էներգիայի ծախսը նույնպես ավելացել է ամսական 899.755կՎտ/ժ (84.85%) :


Երևան քաղաքի էլ.էներգիայի ծախսը ավելացել է 926.250 կՎտ/ժ (19.42%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի պոմպակայանների սպառած էլ.էներգիան



Ընկերության ընդհանուր էլ.էներգիայի ծախսը ավելացել է 127.415Կվտ/ժամով (22.20%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոլիա Ջուր» ՓԲ Ընկերության կողմից սպառած էլ.էներգիան



3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ

- Ջրագրկվող տարածքների բաժանորդների առանձնացում և արտածում ԱՏ համակարգից՝ Առևտրային տնօրինությանը տրամադրելու նպատակով:
- «Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական և ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշգրտում՝ տեղամասերի տեսուչների հետ համատեղ: Հավաքագրված տեղեկատվության ներմուծում ԱՏՀ և փոխանցում Առևտրային տնօրինությանը՝ բաժանորդների տվյալների բազայի թարմացման նպատակով:

- «Էրեբունի Զանգված» ջրամատակարարման գոտու քարտեզների և տվյալ տարածքի իրավաբանական ու ֆիզիկական բաժանորդների ցուցակների կազմման համար ծածկագրերի տրամադրում:
- ՀՀ թվով 25 բնակավայրերի «AutoCAD» ֆորմատով քարտեզների վերափոխում (տրանսֆորմացիա) ԱՏ համակարգի թվային քարտեզների ձևաչափի:
- Երևան քաղաքի ջրատար համակարգի և ջրամբարների թվով 20 սխեմաների կազմում և տպագրում՝ հայերեն և անգլերեն լեզուներով:
- «Լոռի ջրմուղկոյուղի», «Շիրակ ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲ ընկերությունների նախկին սպասարկման տարածքների օպերատորների կողմից սպասարկվող բնակավայրերի և տարածքների էլեկտրոնային քարտեզների խմբավորում, անհրաժեշտ ինֆորմացիայի տարանջատում, համակարգում և միավորում՝ ըստ մարզկենտրոնների (թվով 230 գյուղ և 37 քաղաք):
- Տարածաշրջանների տնօրինությունների ինժեներների կողմից ներկայացված ջրամատակարարման և ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների համակարգում, համապատասխան գծագրերի կազմում և մուտքագրում ԱՏ համակարգ:
- Գյումրի և Վանաձոր քաղաքների հատակագծերի և ջրագծերի քարտեզների տրանսֆորմացիա և կապում կոորդինատային համակարգի հետ:
- Գետամեջ, Սիփանիկ գյուղերի տարածքով անցնող ջրատարների վթարների սխեմաների կազմում «Google Earth» ծրագրում և վթարների լուսանկարների կցում:
- Բազում – Տաշիր, Բուժական բնակավայրերի ջրագծերի (տրամագծեր, ջրի ծախս) և կապտաժների սխեմաների կազմում «AutoCad» ծրագրով:
- Արամուսի խորքային հորերի և ջրագծերի (տրամագծեր, ջրի ծախս, ճնշում) և ՕԿՁ-ի սխեմայի կազմում «AutoCad» ծրագրով:
- «Շահումյան» տեղամասի համար ջրագծերի և կոյուղագծերի աշխատանքային քարտեզների կազմում և տպագրում A0 ֆորմատով:
- Վարչական և ֆինանսական տնօրինության համակարգչային բաժնի կողմից տրամադրված իրավաբանական ու ֆիզիկական բաժանորդների վերաբերյալ տեղեկատվության մուտքագրում ԱՏ տվյալների բազա և բաժանորդների տարածական տեղաբաշխվածության թեմատիկ շերտի կազմում:

➤ 1-85 ծառայության կողմից գրանցված ջրագծերի և կոյուղագծերի վթարավերականգնողական աշխատանքների վերաբերյալ ինֆորմացիայի մուտքագրում US համակարգ:

3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ

Հաշվետու ամսվա ընթացքում «SCADA» և «LOCATOR» համակարգերի միջոցով առցանց կառավարվել են «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության սպասարկման տարածքում առկա պոմպային ագրեգատների աշխատանքը, ջրամբարների լցվածության աստիճանը, ճնշումային լոգերների, ջրաչափական սարքերի աշխատանքը և բաշխիչ ցանցում առկա մնացորդային քլորի համապատասխանելիությունը սահմանված չափաբաժնին:

«Շոր-Շոր» պոմպակայանից դեպի քլորատան հանգույց տարածքում տեղի էր ունեցել ջրատարի փականի խափանում, որը նկատելի դարձավ «Դավիթաշեն վերին» ՕԿՁ-ի մուտքագծի ջրատարի ջրաքանակի կտրուկ նվազմամբ, գյուղ Մերձավանի ջրատարի ջրաքանակի նվազմամբ և «Քասախ 1» և «Քասախ 2» ՕԿՁ-ների ջրատարների մուտքագծերի ջրաքանակի ավելացմամբ: Իրականացված որոշակի աշխատանքների շնորհիվ փականի ավտոմատ կառավարումը կարգավորվել է :

«Դավիթաշեն վերին» ՕԿՁ-ի մուտքագծի ջրաքանակ



4-րդ գյուղ Մերձավանի ջրաչափ



«Գառնի» ջրատարից դեպի «Արին Բերդ» ՕԿՁ-ի խճուղի ջրատարի ջրաքանակը նվազել էր 60լ/վ-ով, ինչը պայամանավորված էր «Գառնի-Երևան» ջրատարից դեպի Արարատի մարզ, գյուղ Խարբերդ գնացող ջրատարի ջրաքանակի ավելացմամբ: Գյուղ գնացող ջրաքանակը սովորաբար կազմում է 60լ/վ, սակայն արտաքին միջամտությամբ՝ փականի բացման պատճառով գյուղ գնացող ջրաքանակը կազմել էր 120լ/վ: Խնդիրը կարգավորվել է՝ փականը նախնական դիրքի բերելով :

4. ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ ՍԵՐՎԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

4.1. Համակարգչային ցանց

Հունիս ամսվա ընթացքում կատարվել են համակարգչային ցանցի ընթացիկ սպասարկման աշխատանքներ: Տվյալների բազայի մուտքագրման բաժնի համակարգիչները փոխարինվել են «Բարակ միացում» սարքավորումներով, որը հնարավորություն է տալիս աշխատել միասնական մեկ համակարգում և ապահովել բարձր արագագործություն:

«Microsoft» ընկերության հետ կնքվել է նոր պայմանագիր, որի արդյունքում զգալիորեն կթարմացվեն առկա ծրագրային արտոնագրերը: Թվով 30 համակարգիչներում կտեղադրվեն վերջին թողարկման «MS Office 2016» ծրագիրը:

Ավարտին են հասցվում նոր՝ vjur.am, Էլեկտրոնային նամակագրությամբ աշխատող օգտատերերի գրանցման աշխատանքները, ինչը լիովին կփոխարինի նախկինում օգտագործվող yerevandjur.am և armwater.am նամակագրության սերվերներին:

Հաշվետու ամսվա ընթացքում «Ինտերակտիվ» համակարգը տեղափոխվել է լիովին նոր միջավայր, որի արդյունքում զգալիորեն ավելացել է ծրագրի արագագործությունը, և արդիականացվել է պահուստային պահպանման գործընթացը (backup):

4.2 Ինտերակտիվ համակարգ

Օգտատերերի կտրուկ աճի և պահանջարկի ավելացման պատճառով «Ինտերակտիվ» համակարգի սերվերային ապահովման սարքավորումների փոփոխման հետ կապված կատարվել են մի շար աշխատանքներ: Նոր սերվերային համակարգը համալրվել է այլ օպերացիոն համակարգով (Debian): Կատարվել են թեստավորման աշխատանքներ առկա ծրագրային փաթեթների և նոր օպերացիոն համակարգի միջև: Մշակվել և կիրառվում է երկու տիպի տվյալների պահուստավորման եղանակ: Արագագործության համար տվյալների բազաները տարանջատվել են ընթացիկ և արխիվային մասերի: Ծրագրային մասում կատարվում են համապատասխան փոփոխություններ::


4.3 Բջջային օպերատորներ և ինտերնետ

Հունիս ամսվա ընթացքում լիովին ավարտին են հասցվել Հ.Էմին հասցեում տեղակայված «Արևմուտք» Տարածաշրջանի Տնօրինության ներքին հեռախոսահամարների կապակցման

աշխատանքները: «V-Office Ucom» համակարգի կիրառմամբ, առցանց տարբերակով լիովին կառավարվում են բոլոր ներքին հեռախոսահամարները:

Մարզերի տեղամասերում ավարտվել են «Rostelekom» հեռախոսային ցանցի թվով 42 հեռախոսահամարների կապակցման աշխատանքները:


Կատարված արդիականացման աշխատանքների արդյունքում զգալի կրճատվել են կապի ծառայության ծախսերը:



4.4 Լոկատոր և SCADA համակարգեր

Հաշվետու ամսվա ընթացքում «Լոկատոր» ընկերության կողմից կատարվել են ընթացիկ սպասարկման աշխատանքներ:

«Locator» ընկերության հետ համաձայնություն է ձեռք բերվել «Sofrel PC Win» համակարգով աշխատող շուրջ 100 սարքավորումներ հասանելի դարձնել «Locator Scada» համակարգում, որը հնարավորություն կտա անսահմանափակ ավելացնել օգտատերերի քանակը և ավելի օպերատիվ կառավարել համակարգը: Ծրագրի թեստային աշխատանքները գտնվում են ավարտական փուլում:



4.5. Նոր սարքավորումներ և ծրագրեր

Շնորհանդեսների ներկայացման և վերապատրաստման դասընթացների առավել արդյունավետ անցկացման նպատակով ձեռք է բերվել «Smart Board» ինտերակտիվ հնարավորություններով սարքավորում:

Սարքավորումը հնարավորություն է տալիս էկրանը օգտագործել որպես ինտերակտիվ գրատախտակ: Առցանց կապակցել հեռախոսի կամ համակարգչի էկրանը և հատուկ ինտերակտիվ գրիչների միջոցով կատարել գրառումներ էկրանի վրա: Էկրանը հնարավոր է օգտագործել նաև «Conference Video» զանգեր կատարելու նպատակով:



5. ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հունիս ամսին Հանրային կապերի ծառայություն գործունեությունն ուղղված է եղել ընկերության առջև դրված խնդիրների լուծմանն աջակցելուն:

Դրա համար, մասնավորապես, «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության մյուս տնօրինությունների հետ համագործակցությամբ, իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնց նպատակն է սպառողներին իրազեկել ընկերության գործունեության, աշխատանքի արդյունքների, ինչպես նաև ապագա ծրագրերի վերաբերյալ:

Հարկ է նշել, որ այս տարի եղանակային պայմաններով պայմանավորված, արդեն հունիսին, սովորականից 1 ամիս առաջ, հասել էր ջրի սպառման «պիկը», տեղերում կային որոշակի դժգոհություններ ջրի անբավարարությունից, հետևաբար պետք էր պարզաբանել իրավիճակը, ներկայացնել դրա պատճառներն ու խնդիրների լուծման ուղիները:

Հունիս ամսվա ամենակարևոր իրադարձությունը «Վեոլիա Ջուր» ՓԲԸ գլխավոր տնօրեն՝ Կրիստիան Լըֆեի հարցազրույցն էր «Հ2» հեռուստաալիքին, ով 36 րոպե տևողությամբ



հաղորդման ընթացքում ներկայացրեց ընկերության գործունեությունը, առկա խնդիրները ու առաջիկա ծրագրերը:

Հաջորդ միջոցառումը լրագրողների այցերի կազմակերպումն էր Արմավիր մարզի Մրգաշատ գյուղ ու Մեծամոր,

Ստեփանավան


քաղաքներ՝ ջրամատակարարման բարելավմանն ուղղված տարվող աշխատանքներին ծանոթանալու համար, որտեղ մեծածավալ գործեր են կատարվում նոր ջրագծերի կառուցման, ջրի կորստի կրճատման ու ջրի վաճառքի կանոնավորման առումով:

Հունիս ամսին սկսվել է համագործակցություն «Yerevan Today» առցանց հեռուստաալիքի հետ, որը ունի օրական մի քանի հազար այցելու, որոնք հիմնականում հասարակության



կրթված զանգվածն է, որը ստույգ և հիմնավորված տեղեկատվության կարիք ունի: Այդ նպատակով պարբերաբար պատրաստվում են 5 րոպե տևողությամբ հարցազրույցներ

տարբեր հրատապ թեմաներով, ինչպես նաև 5-7 րոպե տևողությամբ ռեպորտաժներ՝ ընկերության ընթացիկ գործունեության, մասնավորապես շինարարության վերաբերյալ:



Yerevan.Today-ը «Վեդլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ համատեղ սկսում է նոր՝ «Մեր տան ջուրը» հատուկ նախագիծը: Ամեն ինչ ջրի ու ջրամատակարարման մասին առաջին ձեռքից: Ձուրաքանչյուր շաբաթ ընկերության ղեկավար կազմի տարբեր ներկայացուցիչներ կպարզաբանեն և կպատասխանեն ջրամատակարարման ոլորտի հարցերի, կփորձենք անարձագանք չթողնել սպառողների շրջանում մշտապես առաջացող և ոչ մի հարց: Տեղեկացնենք նաև, որ կայքի այցելուները ևս կարող են մասնակից դառնալ հաղորդմանը՝ ուղղելով իրենց հուզող հարցերը այս [հասցեով](#) կամ պարզապես մեր ֆեյսբուքյան էջին հաղորդագրություն ուղարկելով:

այուևակներ

18.07.2017

**Մեակ
Հակոբյան**

Պաշտոնական լեզուն և մեր արժանապատվությունը